ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության 2016թ-ի
հիմնական միջոցառումների կատարման վերաբերյալ

Շիրակի մարզային փրկարարական վարչությունը ղեկավարվելով ”Փրկարար ծառայության մասին”,”Քաղաքացիական պաշտպանության մասին” և ”Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին” ՀՀ օրենքներով, ՀՀ Կառավարության և Վարչապետի որոշումներով, ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի, Շիրակի մարզպետի որոշումներով և կարգադրություններով, գործելով Շիրակի մարզային փրկարարական վարչության 2016թ. աշխատանքային պլանի՝ իրականացրել է հետևյալ աշխատանքները:

ԱԻ ուղղությամբ

Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման, հետեւանքների նվազեցման ուղղությամբ պարբերաբար իրականացվում են հետևյալ միջոցառումները.

- Մշտական հսկողություն է սահմանված մարզի քիմիական վտանգավոր օբյեկտներում առկա ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի և պահպանման նկատմամբ: Մարզում առկա են թվով 2 քիմիական վտանգավոր օբյեկտներ՝ <<ԱԼԵՔՍ ԳՐԻԳ>> ՍՊԸ-ն, Գյումրու նախկին «Կեչոր» ՍՊԸ-ն և «Գյումրի գարեջուր» ՍՊԸ-ն, որտեղ օգտագործվում է ուժեղ ներգոծող քիմիական թունավոր նյութ՝ ամոնիակը, քիմիական վտանգավոր նյութերից՝ քլոր է օգտագործում «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ –ն՝ ջրամատակարարման և կոյուղու ցանցի վարակազերծման նպատակով: ՈՒՆԹՆ-ի քանակի վերաբերյալ տեղեկությունները յուրաքանչյուր ամիս ներկայացվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ:
- Մշտական հսկողություն է սահմանված մարզի քիմիական վտանգավոր օբյեկտի անվտանգության վկայագրում ընդգրկված ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների կատարման նկատմամբ և յուրաքանչյուր կիսամյակ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվում տեղեկություններ կատարված միջոցառումների (ջրային փականների վերանորոգման, ամոնիակային կոմպրեսորի պրոֆիլակտիկ զննման, ճնշման տակ աշխատող փականների ստուգման, կոնդենսատորի խողովակաշարերի կրային նստվածքներից մաքրման աշխատանքների) վերաբերյալ:
- Ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի հանձնարարականի ս.թ հունվար ամսին ԲՊ բաժնի կողմից իրականացվել են ուսումնասիրություններ մարզի քիմիական վտանգավոր օբյեկտի անվտանգության վկայագրում ընդգրկված ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների կատարման իսկության պարզաբանման նպատակով և ստուգման արդյունքները արձանագրության տեսքով ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ:
- Մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի նկատմամբ մշտական հսկողությունը իրականացնում են ՃՔՄԻՄՀ համակարգում ընդգրկված թվով 5 կազմակերպությունները և նրանց կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները յուրաքանչյուր ուրբաթ ներկայացվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն:
- Մարզում համաճարակային իրավիճակը բնակչության և գյուղ. կենդանիների շրջանում՝ հաշվետու ժամանակահատվածում եղել է հանդարտ եւ վերահսկելի, իսկ օդի աղտոտվածությունը, միջինը՝ կազմել է 0.26մլգ./մ^3, ճառագայթային ֆոնը, միջինը՝ 15մկռ./ժ.:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ մարզի ՃՔՄԻՄՀ համակարգում ընդգրկված կազմակերպությունների գործունեության ոլորտների և տեխնիկական հագեցվածության վերաբերյալ:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ է ներկայացվել տեղեկություններ մարզի առաջին կանչի ուժերի և դրանց տեխնիկական հագեցվածության վերաբերյալ:
- ՇՄՓՎ կողմից կազմվել է մարզի տարածքում 2016 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների ծրագիրը, որտեղ համայնքների ղեկավարները ներկայացրել են իրենց կողմից 2016 թվականի ընթացքում իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումները: Համաձայն այդ ծրագրի, հեղեղավտանգ ժամանակահատվածում սելավատարների հուների մաքրման աշխատանքներ են նախատեսվել և իրականացվել Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքներում, Ախուրյանի, Անիի, Արթիկի, Ամասիայի, Աշոցքի տարածաշրջանների համայնքներում՝ 20630 մետր ընդհանուր երկարությամբ: Հեղեղատարների մաքրման նպատակով համայնքային բյուջեներից նախատեսվել է ծախսել մոտ 8,5 մլն. դրամ, մասնավորապես՝ ք.Գյումրիում – 4 մլն. դրամ, ք.Արթիկում – 1,5 մլն դրամ, ք.Մարալիկում – 700 հազ. դրամ, գ.Ախուրյանում - 200 հազ. դրամ, գ.Ազատանում - 300 հազ. դրամ, գ.Աշոցքում - 300 հազ. դրամ, գ. Ամասիայում - 300 հազ. դրամ, այլ համայնքներում – 1,2 մլն դրամ:
- 24.06.2016թ-ին մարզի տարածքում ջերմաստիճանի կտրուկ բարձրացման, առատ տեղումների և կարկտահարության հետևանքով հեղեղումներ և տարածքների ողողումներ են արձանագրվել Արթիկ քաղաքում՝ տուժել և վնաս են կրել Արթիկի թիվ 2-րդ դպրոցը, թիվ 2-րդ նախակրթարանը,դատարանի շենքը, Մովրովենց և Բմբուլենց սելավատարերը, ինչպես նաև փողոցներ, ենթակառուցվածքներ, թվով 12 անհատական տնտեսությունների շենք-շինություններ, թվով 23 բնակելի տների տնամերձեր, 1,8 հա գյուղ մշակաբույսեր: Վնասի չափը կազմել է՝ **605 մլն 280 հազար դրամ**: Արթիկ քաղաքում սելավի պատճառած վնասների վերացման, մաքրման և վերականգնողական աշխատանքներ են կատարվել Ախուրյանի <<Մերձմոսկովյան>> ՓԲԸ կազմակերպության կողմից: Տուժած տարածքներից Մովրովենց և Բմբուլենց սելավատարերի, <<Ստեկլոմաշ>> թաղամասի, սկսած Պռոշյան, Շինարարների, Բաղրամյան, Անկախության, Տուֆագործների, Շահումյան, Սասունցի Դավթի, Սվերդլովի, Չարենցի, Գորկու, Ղուկասյան, Աբովյան փողոցների հարակից սելավատարերից մաքրվել և տեղափոխվել է 886 մեքենա հողաքարային զանգված, որը կազմել է մոտ 13893 մ^3, իրականացվել է նաև ջրցան մեքենաներով նշված փողոցների՝ լվացման աշխատանքներ: Կատարվել է սելավատար մտնելու ճանապարհի հարթեցման աշխատանքներ: Մաքրվել է թվով 14-ից ավելի բնակելի տների բակեր և տնամերձ հողամասեր: Արթիկի թիվ 2-րդ դպրոցի բակից մաքրվել և տեղափոխվել է 28 մեքենա հողային զանգված, որը կազմել է 440 մ^3: Իրականացվել է Մովրովենց ձոր սելավատարի վրա գտնվող ծածկի սալիկների հեռացման աշխատանքներ՝ ֆինանսավորումը իրականացվել է Արթիկի քաղաքապետարանի կողմից: <<Հայջրմուղի>> կողմից հիմնանորոգվել և անցկացվել է

նոր կոյուղատար Արթիկի թիվ 2-րդ դպրոցի և թիվ 2-րդ նախակրթարանի համար: Պլանավորված հետագա աշխատանքները իրականացվելու են համապատասխան ուսումնասիրություններից հետո:

- 09.08.2016թ-ին հայկական Կարմիր խաչի միջազգային կազմակերպության կողմից աջակցություն է ցուցաբերվել Արթիկ քաղաքում տեղի ունեցած հեղեղումների հետևանքով վնասներ կրած բնակիչներին՝ թվով 12 ընտանիքի տրամադրվել է 87 հազարական ՀՀ դրամ, սննդի և հիգիենիկ պարագաներով արկղեր ամեն անձի համար, երկու ամսվա չափաբաժնով:
- Սկսած փետրվար ամսից ՇՄՓՎ ԲՊ և ՃԿԿ բաժինների սպայական կազմի կողմից ՔՈՓ թիմի անձնակազմի հետ անցկացվում են տեսական և գործնական դասընթացներ՝ փրկարարական մեթոդների, գույք – սարքավորումների խնամքի ապահովման և կառավարման գործողությունների ուսուցումը թեմաներով:
- Յուրաքանչյուր եռամսյակ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԹՆԱՎ է ներկայացվում տեղեկություններ Շիրակի ՄՓՎ ենթակա ստորաբաժանումներում <<Արձագանք>> ծրագրով ստացված գույքի պահպանման վերաբերյալ:
- 2016 թ-ի ընթացքում 2015 – 2030 թթ-ի Սենդայի ԱՌՆ գործողությունների ծրագրի շրջանակներում՝ բնակչության շրջանում աղետներին դիմակայելու, անվտանգության մշակույթի ձևավորման և մարզում ԱՌՆ գործընթացները ուղղորդելու նպատակով ՀՀ Շիրակի ԱՌՆ մարզային թիմը աջակցում և նպաստում է համայնքների, կազմակերպությունների, կրթական հաստատությունների ԱՌՆ կարողությունների զարգացմանը:
- ՇՄՓՎ և ՋԱՅԿԱ>> միջազգային համագործակցության կազմակերպության մասնագետների կողմից մարզի Առափի համայնքում որպես իրական ժամանակում սողանքի դիտման համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների մի մաս, իրականացվել է չափող սարքերը (հորատանցքի էքստենզոմետր տենզոտվիչ, մակերևութային էքստենզոմետր և ջրի մակարդակի չափիչ) կապի մալուխի միջոցով միացնելու համար մալուխի անցկացման աշխատանքները, ՇՄՓՎ և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության մասնագետների հետ համատեղ հորիզոնական հորատման սարքով իրականացվել է հորատման աշխատանքներ՝ գրունտային ջրերի դուրս բերման նպատակով:
- <<Սողանքային աղետի կառավարում>> ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի Առափի համայնքի սողանքային տեղամասում իրականացվում են լանջի կայունացման աշխատանքներ: ՇՄՓՎ կողմից ցուցաբերվում է աջակցություն ընթացող հորատման աշխատանքներին:
- ՇՄՓՎ ԲՊ բաժնի կողմից կատարվել է սողանքի գոտում տեղադրված չափող սարքերից տվյալների ձեռք բերման և գրանցման աշխատանքներ: Ստացված տվյալները հաղորդվել են <<ՋԱՅԿԱ>> ճապոնական միջազգային համագործակցության գործակալության մասնագետներին:
- Նախապես ընտրված թվով 2 տեղամասերում, սողանքային շարժի լրացուցիչ դիտման համար՝ սողանքային գոտու վերին և ստորին հատվածներում 16.09.2016թ-ին տեղադրվել են թվով 4 վերգետնյա թեքաչափեր՝ հյուսիս-հարավ (2 հատ) և արևելք-արևմուտք (2 հատ) ուղղություններով:
- Մարզի թվով 161 ուսումնական հաստատությունների ԱՌՆ և ԱԻ-ում գործելու պլանների մշակման գործընթացի կազմակերպման նպատակով՝ ուսումնական հաստատությունների ԱՌՆ և ԱԻ պատասխանատուներին ՇՄՓՎ կողմից ցուցաբերվել է մեթոդական օգնություն:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ մարզի տարածքում առկա վթարային շենքերի վերաբերյալ՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ տեղեկատվական բազան թարմացնելու նպատակով:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին է ներկայացվել տեղեկություններ՝ Շիրակի մարզի խոշոր գետավազան համարվող Ախուրյան գետի գետավազանի թվով 5 հիդրոլոգիական դիտակետերում ջրի հնարավոր վնասակար ներգործության առավելագույն նիշերի վերաբերյալ:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ մարզում առկա գործող կազմակերպությունների վերաբերյալ:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել Շիրակի մարզի տարածքում 2016թ-ի 1-ին կիսամյակի ընթացքում տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների չափերի վերաբերյալ մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտերը:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ՝ Շիրակի մարզի տարածքում գործող մարզաառողջարանային ճամբարի վերաբերյալ՝ ըստ կից ներկայացվող ձևի:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել Շիրակի մարզում միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից <<Տեղական մակարդակում ռիսկի կառավարում>> մեթոդիկայով Զույգաղբյուր, Նահապետավան, Մարմաշեն, Անիպեմզա, Հովունի, Աշոցք, Ողջի և Մեծ Սեպասար համայնքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետվությունը:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ԾԿՎ է ներկայացվել տեղեկություններ՝ 2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ԱԻ ոլորտին առնչվող ՇՄՓՎ կողմից միջազգային ծրագրերով իրականացվող միջոցառումների վերաբերյալ:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՕԿՎ է ներկայացվել առաջարկություններ՝ հաշվետախտակի ձևեր 39-ի և 40 –ի վերաբերյալ:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ է ներկայացվել տեղեկություններ՝ Շիրակի մարզում գտնվող Արփի լճի, Կառնուտի, Մանթաշի, Սառնաղբյուրի, Թավշուտի և Վարդաքարի ջրամբարների վերաբերյալ՝ կից քարտեզներով և լուսանկարներով:
- Շիրակի մարզի մարզպետին է ներկայացվել առաջարկություններ՝ Գյումրի, Մարալիկ քաղաքների և Փանիկ համայնքի տարածքներում, սելավատարերի մաքրման և կառուցապատման ուղությամբ նախատեսվող աշխատանքներին համապատասխան աջակցություն ցուցաբերելու նպատակով:
- 01.12.2016թ-ին ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն տեղեկություններ է ներկայացվել Շիրակի մարզի <<Ուսումնական հաստատությունների ԱՌՆ և ԱԻ-ում գործելու պլանների>> մշակման ընթացքի վերաբերյալ:
- 2016թ-ի նոյեմբերի 30 – դեկտեմբերի 1-ը Վրաստանի Հանրապետության ք.Թբիլիսիում <<Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ>> ծրագրի ջրջանակներում անցկացված տարածաշրջանային սեմինարին մասնակցել է ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ՝ Ա.Կարապետյանը:
- 2016թ-ի դեկտեմբերի 6-ին ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ՝ Ա.Կարապետյանը մասնակցել է Գյումրու քաղաքապետարանում կայացած աղետների ռիսկերի կառավարմանը նվիրված աշխատաժողովին:
- 2016թ-ի դեկտեմբերի 12-22-ը <<ՋԱՅԿԱ>> ճապոնական միջազգային համագործակցության գործակալության հետ իրականացվող <<ՀՀ-ում սողանքային աղետների կառավարում>> ծրագրի շրջանակներում անցկացվող վերապատրաստման

դասընթացին մասնակցելու նպատակով ՀՀ ԱԻՆ ՓԾ ՇՄՓՎ ԲՊ բաժնի պետ – վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ՝ Լ. Հովսեփյանը գործուղվել է Ճապոնիա:

- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՕԿՎ է ներկայացվել տեղեկություններ Շիրակի մարզում տեղադրված ազդարարման սարքավորումների (էլ.շչակների) վերաբերյալ՝ հաշվետախտակի ձև 46:

<u>ՔՊ ուղղությամբ</u>

- Համաձայն շտապ զեկույցների հաշվետախտակի ձևերի, ՀՀ ԱԻՆ ՓԾ ՔՊՄԿ վարչություն է ներկայացվել՝
  - տեղեկություններ մարզի կազմակերպություններում առկա ՔՊ զույքի վերաբերյալ:
  - տեղեկություններ ՔՊ զորահավաքային պահուստի զույքի գույքագրման վերաբերյալ:
  - ամփոփագիր մարզի ՔՊ կազմավորումների, դրանց անձնակազմի թվաքանակի և հագեցվածության վերաբերյալ:

-տեղեկություններ մարզում առկա ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների վերաբերյալ:

- Ճշգրտվել են տեղեկությունները մարզում առկա ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ավտոմոբիլային ճանապարհների և դրանք սպասարկող կազմակերպությունների, էլեկտրահաղորդման ցանցերի և գծերի, գազամատակարարման գծերի և օբյեկտների, առկա ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրմուղի ցանցերի և կառուցվածքների վերաբերյալ:
- Ամբողջությամբ լրամշակվել և ճշգրտվել են <<Մարզի քաղաքացիական պաշտպանության>> և <<Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարահանման հանձնաժողովի>>պլանները:
- Ճշգրտվել է մարզի բնակչության պատսպարման հաշվարկը համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ ՔՊՄԿ վարչության կողմից ներկայացված ձևերի:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՔՊՄԿ վարչություն է ներկայացվել առաջարկություններ ռազմական դրության ժամանակ Շիրակի մարզում գործունեությունը շարունակող կազմակերպությունների ՔՊ հիմնական ցուցանիշների բազայի օրինակելի ձևի վերաբերյալ:

ՄԱՐԶՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ (ԴԵՊՔԵՐԻ) ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Մարզում տեղի ունեցած ԱԻ դեպքերի օպերատիվ արձագանքման և հետևանքների մեղմացման աշխատանքների կատարման ժամանակ Շիրակի մարզային փրկարարական վարչության կողմից կազմակերպվել է փոխհամագործակցություն մարզի ՔՊ ծառայությունների, շահագրգիռ կազմակերպությունների և մարզում տեղակայված զին.մասերի հետ:

2016թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ ՄՓՎ ՃԿԿ-ի ստացված զանգերի թիվը կազմել է՝ 85673

- *<u>Ըստ բնույթի</u> արձանագրված ԱԻ դեպքերի տոկոսային հարաբերությունը բաշխվել է հետևյալ կերպ՝*

<u>Արձանագրված – 622 դեպքերից</u>

- ՏԵԽՆԱԾԻՆ ԲՆՈՒՅԹԻ –78.3% (487 դեպք)
- ՏԱՐԵՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ –4.3% (21 դեպք)
- ՍՈՑԻԱԼ – ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ – 17.4% (108 դեպք)

➢ <u>Ըստ առաջացման տեղի</u> արձանագրված հրդեհները 312 հրդեհ բաժանվում են հետևյալ կերպ՝.

ԿԿ ՏԱՐԱԾՔ – 46.2% 144 դեպք

- ԲՆԱԿԵԼԻ ՀԱՏՎԱԾ – 19.2% 60 դեպք

ԱԾԿ ՏԱՐԱԾՔ -10.6 % 33 դեպք

ԿԵՐ - 7.4% 23 դեպք

- ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ – 4.5 % 14 դեպք

Մ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵՐՈՒՄ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՂԲ – 3.9% 12 դեպք

ԿՏՆԵՐ – 2.6% 8 դեպք

ՈԱՀԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ- 2.2% 7 դեպք

ՆԱԿՆԵՐ- 1.6% 5 դեպք

ԵՐ- 0.6 % 2 դեպք

Ն և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ- 0.6 % 2 դեպք

ՕԲՅԵԿՏՆԵՐ - 0.3 % 1 դեպք

ՈԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ- 0.3 % 1 դեպք

2016թ.-ի ընթացքում արձանագրված ԱԻ դեպքերի համեմատականը

2015թ.-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ ներկայացվում է ստորև բերված աղյուսակում՝

ՕՊԵՐԱՏԻՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

- Յուրաքանչյուր ամիս կազմվել և ՕԿՎ է ներկայացվել վարչության ամսական աշխատանքային պլանները:
- ՕԿՎ է ներկայացվել ամսական հիմնական միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվությունները:
- ՕԿՎ է ներկայացվել ամսական ՄՓՎ ենթակա ստորաբաժանումների կողմից իրակա-նացված տրանսպորտային ելքերի վերաբերյալ հաշվետվությունները:
- ՕԿՎ պարբերաբար ներկայացվել է ստորաբաժանումների ազդարարման սխեմաները և հավաքի գրաֆիկները:
- ՕԿՎ է ներկայացվել աշխատանքային շաբաթների ընթացքում ՄՓՎ կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունները:
- Յուրաքանչյուր եռամսյակ ՕԿՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ աշխատակիցների ճշգրտված հասցեները և հեռախոսահամարները:

Մարզային շտաբային ուսումնավարժություն

- Ս.թ. ապրիլի 19-ին մարզում անցկացվել է Առափիի սողանքի կտրուկ ակտիվացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը թեմայով

Փրկարարական ծառայողների հետ անցկացվող շտաբային ուսումնավարժություն

- Ս.թ. հունիսի 01-ին անցկացվել է ՔՊ միջոցառումների կազմակերպումը քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ թեմայով
- Ս.թ. դեկտեմբերի 01-ին անցկացվել է Առափիի սողանքի կտրուկ ակտիվացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը թեմայով

Մարզի համայնքներում անցկացված շտաբային ուսումնավարժություններ

2016 թվականի ինն ամիսների ընթացքում մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզի համայնքների կողմից արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության թեմաներով անցկացված թվով 88 շտաբային ուսումնավարժությունների, ինչպես նաև մասնակցություն է ցուցաբերվել թվով 30 շտաբային ուսումնավարժությունների:

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն

Ս.թ. հոկտեմբերի 18-ին Շիրակի մարզի Ախուրյան համայնքում անցկացվել է «Փրկարարական աշխատանքների իրականացումը փլուզված շինությունում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն:

Մարզի թվով 14 ուսումնական հաստատություններում անցկացվել է հատուկ տակտիկական ուսումնավարժություններ

- 01.03.16թ. մարզի ուսումնական հաստատություններում Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների կողմից ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ անցկացվել է՝
  ՀՏՈՒ- ներ - «Պատսպարման կազմակերպումը « Օդային տագնապ» ազդանշանի դեպքում» թեմայով (Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոցում անցկացված ՀՏՈՒ-ն տեսաձայնագրվել է և ներկայացվել ՓԾ ՕԿՎ)

- 06.09.16թ. մարզի ուսումնական հաստատություններում Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների կողմից ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ անցկացվել է՝
  ՀՏՈՒ- ներ - «Տարանման միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում» թեմայով (Գյումրու մշակույթի վարժարանում անցկացված ՀՏՈՒ-ն լուսանկարվել և ներկայացվել է ՓԾ ՕԿՎ)

Մարզում գործող կազմակերպություններում հատուկ տակտիկական ուսումնավարժություններ

- 13.05.2016թ. « ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ հյուսիսային տարածքային կենտրոնի «Շիրակ» ուղղության կողմից անցկացվել է «Ախուրյան համայնքում ստորգետնյա 300 զույգանոց հեռախոսային մալուխի վնասվածքի դեպքում վթարավերականգնո-ղական աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով
- 18.08.2016թ. « Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Շիրակի ԳԳՄ մասնաճյուղի կողմից անցկացվել է «Գյումրու Ղանդիլյան փողոցում գտնվող գազակարգավորիչ կայանում վթարավերականգնողական աշխատանքների իրականացում գազի արտահոսքի դեպքում» թեմայով
- 14.10.2016թ. « Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի կողմից անցկացվել է « «Ազատան» 110/35/10 ԿՎ ենթակայանում S-1 110 ԿՎ զատիչ կարճ փակիչի վնասվածքի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում » թեմայով
- 20.10.2016թ. «ԱՄՕ» ՓԲԸ-ի «Շիրակ» օդանավակայանի կողմից անցկացվել է « Վթարային վայրէջք՝ օդանավի բեռնախցիկում ծխի առկայության պատճառով» թեմայով
- 17.11.2016թ. «Շիրակ- ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից անցկացվել է « Շիրակի մարզի Ախուրյան, Նոր Ախուրյան, Մայիսյան, Հացիկ, Շիրակ, Կառնուտ գյուղերը սնուցող Ախուրյանի ջրագծի վթարի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում » թեմայով

Մարզում գործող կազմակերպություններում օբյեկտային վարժանքներ

- 14.07.2016թ. « Գյումրու մոր և մանկան Ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից անցկացվել է «Տարահանման միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում» թեմայով
- 08.11.2016թ. « Գյումրի-Գարեջուր» ՍՊԸ-ի կողմից անցկացվել է «Սառնարա-նակոմպրեսորային արտադրամասում գոլորշացուցիչի եռակցման կարերի բացվածքի պատճառով ամոնյակի արտահոսքի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների իրականացում» թեմայով
- 22.11.2016թ. « Գյումրի-Գարեջուր» ՍՊԸ-ի «Ալեքսանդրապոլ» արտադրամասի կողմից չի անցկացվել նախատեսված օբյեկտային վարժանքը՝ արտադրամասի փակման պատճառով:

Մասնակցություն ՀՀ ԱԻՆ ՓԾ կողմից անցկացվող ՀՇՈՒ-ին

- 08-09.06.2016թ. «Երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը և կազմակերպումը » թեմայով ՀՇՈՒ-ի և INSARAG չափորոշիչներին համաձայն քաղաքային որոնողափրկարարական 5 միջին թիմերի հետ 36 ժամյա վարժանք

Մասնակցություն ՀՀ ԱԻՆ ՓԾ կողմից անցկացվող շտաբային մարզումներին

- 25.05.2016թ. « ՀՀ ԱԻՆ ՓԾ անձնակազմի գործողությունները խաղաղից պատերազ-մական ժամանակաշրջանի փոխադրման դեպքում » թեմայով

Մասնակցություն ՀՀ ԱԻՆ ՓԾ կողմից անցկացվող հատուկ տակտիկական ուսումնավարժություններին

- 14-16.09.2016թ. «ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանությունը հակառակորդի օդուժի հարձակման դեպքում» թեմայով գործնական միջոցառումների իրականացմանը գործնական ազդարարում, պատսպարում, տարահանում»:

Մասնակցություն մարզպետարանի կողմից անցկացվող շտաբային մարզումներին

- 27.04.2016թ, 21-22.07.2016թ. և 24.11.2016թ. մարզպետարանի աշխատանքային խմբի հետ անցկացված շտաբային մարզումներին

Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ
Հատուկ տակտիկական ուսումնավարժություններ
(կարևորագույն և վտանգավոր օբյեկտներում)

❖ ՀՓՋ-ի կողմից՝ ըստ սպասարկման տարածքների.
«Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը» թեմայով:
Գյումրու թիվ 48 ՀՓՋ – *23.* 03 – Գյումրու թիվ 18 միջն. դպրոց
16.06 - Գյումրու պետական բժշկական քոլեջ
13.09 - Գյումրու թիվ 24 հիմն. դպրոց
29.11- Գյումրու թիվ 4 հիմն. դպրոց

Արթիկի թիվ 49 ՀՓՋ - 15.03 -ք. Արթիկ «Հատուկ բժշկական քոլեջ» ՓԲԸ
20.06- «ՀԷՑ» ՓԲԸ «Ղարս» մասնաճյուղի «Արթիկ» 110/35/10 ԿՎ ենթակայան
25.09- ք. Արթիկի թիվ 1 հատուկ դպրոց
24.11- ք. Արթիկի «Վարազ Սամուելյանի» մշակույթի տուն

Ամասիայի թիվ 50ՀՓՋ - *23.03-* գ.Ամասիայի «Նանե» նախակրթարան ՀՈԱԿ
24.06 – WKS ARMENIA կարի ֆաբրիկա
28.09- Ամասիայի պանիր ՍՊԸ
24.11 - գ.Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց

Անիի թիվ 51 ՀՓՋ – *15.03* - ք. Մարալիկի «Նայթեքս» ԲԲԸ
20.06- ք. Մարալիկի «Նայթեքս» ԲԲԸ
13.09- Մարալիկ- Անի ՍՊԸ
25.11- Մարալիկ- Անի ՍՊԸ

Աշոցքի թիվ 52 ՀՓՋ – *24.03- գ.*Աշոցքի ԱՍՍ ԲԲԸ
21.06- *գ.*Աշոցքի մարզամշակութային կենտրոն
29.09- գ.Ղազանչիի միջն. դպրոց
21.11 - *գ.*Աշոցքի Գյումրի հաց ԲԲԸ

Ախուրյանի թիվ 53ՀՓՋ – 23.03- գ.Ախուրյանի Սամ-Թոմ ՍՊԸ
24.06 – գ. Ախուրյանի Առաջին քայլեր նախակրթարան 29.09 - գ. Ախուրյանի համայնքապետարան
29.11 - ԼԱՕ ՍՊԸ

Շիրակի ՔՈՓ թիմ

- Շվեյցարիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության հետ համագործակցության շրջանակներում իրականացվող «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրերի շրջանակներում՝ Շիրակի ՄՓՎ-ի և Գյումրու ՀՓՋ-ի բազայի հիման վրա ստեղծվել է Շիրակ քաղաքային որոնողափրկարարական միջին թիմը:
- 08-09.06.2016թ. INSARAG չափորոշիչներին համաձայն քաղաքային որոնողա-փրկարարական 5 միջին թիմերի հետ Գյումրի քաղաքում անցկացվել է 36 ժամյա վարժանք
- 26-30.09.2016թ. INSARAG չափորոշիչներին համաձայն Շիրակի քաղաքային որոնողափրկարարական միջին թիմերի հետ Գյումրի քաղաքում անցկացվել է 36 ժամյա ստուգողական վարժանք

Մարզում մանկապատանեկան հրշեջ փրկարարական թիմերի ստեղծում և նախապատրաստում
Մարզում ստեղծվել է թվով 68 հրշեջ փրկարարական թիմեր,որոնցում ընդգրկված են թվով 526 բարձր դասարանի աշակերտներ՝ թվով 52 դպրոցներից

- 2016թ ընթացքում Շիրակի մարզի դպրոցներում ստեղծված պատանի հրշեջ փրկարարաների թիմերի աշակերտների հետ անց են կացվել ԱԻ տարբեր թեմաներով դասընթացներ:
- Մարզի դպրոցներում ստեղծված պատանի հրշեջ - փրկարարաների թիմերի անձնակազմերի հետ ուսուցումը իրականացվում է դպրոցների զինղեկների կողմից՝ համապատասխան դպրոցական ծրագրերի շրջանակներում, որին պարբերաբար մասնակցում են մեր աշխատակիցները: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են պատանի հրշեջ-փրկարարների այցեր Շիրակի ՄՓՎ ենթակա ՀՓՋ-ներ, որտեղ նրանց ներկայացվել է ջոկատներում առկա հրշեջ-փրկարարական տեխնիկան և փրկարարական գույքը, ինչպես նաև ծառայության կազմակերպման առանձնահատկությունները: Նախկինում ստեղծված թիմերը վերակազմավորվել են:
- Պատանի հրշեջ փրկարարական թիմերի միջև անցկացվել է մարզային առաջնություն:
- ՓԾ ՓՈՒՎ է ներկայացվել մարզի պատանի հրշեջ-փրկարարների հավաքական թիմի հայտը հանրապետական առաջնությանը մասնակցելու համար: *(ՓԾ տնօրենի 29.02.2016թ. թիվ 17.7/2689-16 հանձ. 2-րդ կետի 2-րդ ենթակետ)*
- Շիրակի ՄՓՎ-ն մասնակցել է ԿՀԵ հումանիտար օգնության և ՔՊ վարչության ղեկավար Ս.Ստոյանովիչի հետ հանդիպմանը, ինչպես նաև Արեգնադեմ, Քեթի, Մեծ Սեպասար և Շիրակավան համայնքային թիմերի կողմից Քեթի համայնքում անցկացված ցուցադրական վարժանքներին:

Մարզում համայնքային թիմերի ստեղծում և նախապատրաստում
Հայկական Կարմիր Խաչ ընկերության, Շիրակի մարզպետարանի և Շիրակի ՄՓՎ-ի հետ համատեղ Կառուցենք դիմակայուն համայնքներ Վրաստանում և Հայաստանում ծրագրի շրջանակներում մարզի թվով 25 թիրախային համայնքներում ստեղծվել են 20 հոգուց բաղկացած համայնքային թիմեր,որոնք ապահովված են պարզագույն փրկարարական գործիքներով, գույքով և հանդերձանքով:

Զորահավաքային պատրաստություն

- Համաձայն առանձին պլան գրաֆիկի համալրող Գյումրու զինվորական կոմիսարիատում իրականացվել է կցագրված անձնակազմի և տեխնիկայի ուսումնասիրում:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

- Ս.թ. 21.12.16թ. և 22.12.16թ Գյումրու թիվ 48, Ախուրյանի թիվ 53, Ամասիայի թիվ 50, Աշոցքի թիվ 52 ՀՓՋ-ներում ՄՓՎ-ի կողմից անցկացվել է տարեկան հաշվետվությունների ամփոփում (ՓԾ տնօրենի 09.12.2016թ N 17.8/14217-16 հանձնարարական):
- ՓԾ ԿՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ ուսումնական խմբի 2016թ. ծառայողական պատրաստականության պարապմունքների անցկացման պլանը: *(ՓԾ տնօրենի 12.03.2016թ. թիվ 17/316 հրաման)*
- Փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքներն անցկացվել են յուրաքանչյուր ամիս 1 օր՝ վեց ուսումնական ժամ տևողությամբ (թվով 40 թեմաներ):
- Վարչության անձնակազմի ինքնուրույն պատրաստության պարապմունքները իրականացվել են յուրաքանչյուր շաբաթ 4-ական ժամ տևողությամբ, իսկ ֆիզիկական պատրաստության պարապմունքները՝ ամիսը 2 օր, 2-ական ժամով:
- Յուրաքանչյուր ամիս փրկարար ծառայողների հետ անցկացվել է շարային պատրաստության պարապմունքներ:
- Ս.թ. ապրիլ և հոկտեմբեր ամիսներին Շիրակի ՄՓՎ հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների անձնակազմի հետ անցկացվել են ֆիզիկական պատրաս-տության ստուգարքներ, արդյունքների վերաբերյալ զեկուցվել է ՓՈԻվ:
- 17.02.16թ. ՄՓՎ ՀՓՋ-ների հրամանատարներն ու տեղակալները մասնակցել են ՓԾ-ում անցկացված ատեստավորմանը:
- ՓԾ տնօրենին է զեկուցվել ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի կազմ-հաստիքային փոփոխությունների վերաբերյալ նախազգուշացման մասին ծանուցման թերթիկների վերաբերյալ: *(ՀՀ ԱԻ նախարարի 22.03.2016թ. թիվ 272-Ա հրաման)*
- ՄՓՎ ենթակա ստորաբաժանումների անձնակազմի հետ անկացվել է Հրշեջ- փրկարարական ստորաբաժանումների անվտանգության տեխնիկայի ժամանակավոր կանոններ թեմայով դասընթացներ և ընդունվել է ստուգարք*(ՀՀ ԱԻ նախարարի 01.02.2016թ. թիվ 59-Ա հրաման)*
- Ս.թ. սեպտեմբերի 04-ին ՀՀ ԱԻՆ ստեղծման 25 ամյակին նվիրված շքերթին մասնակցելու նպատակով ՇՄՓՎ-ում ձևավորվել է համահավաք շարայուն և մասնակիցների հետ անցկացվում է շարային պատրաստության պարապմունքներ՝ համաձայն գրաֆիկի:
- ՓԾ-ում անցկացված ՀՓՋ-ների հրամանատարների, հրամանատարների տեղակալների, ջրասուզակների և հրշեջ-փրկարարների վերապատրաստման դասընթացներին մասնակցել են Գյումրու, Անիի, Աշոցքի, Ամասիայի, Ախուրյանի ՀՓՋ-ների փրկարար ծառայողները:
- 13.12-14.12.16թ. ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչը մասնակցել է Հանրային իրազեկումը՝ որպես աղետների ռիսկի նվազեցման և կայուն զարգացման անկյունաքար միջազգային 4րդ համաժողովին
- 14.12-15.12.16թ. ԲՊԲ և ՃԿԿ ավագ հրահանգիչները մասնակցել են ՀՀ սողանքային աղետի կառավարում ծրագրի շրջանակներում Իրական ժամանակում սողանքի մոնիտորինգի համակարգի կիրառման դասընթացին

❖ **Գյումրիի ՇՄՓՎ ընդհանուր համալրվածությունը կազմում է 90% - ըստ ստորաբաժանումների՝**

ՇՄՓՎ - 95,3 %
Գյումրիի ՀՓՋ - 86.3%
Արթիկի ՀՓՋ - 87,5 %
Անիի ՀՓՋ - 93,8 %
Ախուրյանի ՀՓՋ – 87,5%
Ամասիայի ՀՓՋ – 93,7 %
Աշոցքի ՀՓՋ – 90,3 %

- 2016թ. համալրվել է - 19 ծառայողներով
- Նախնական հրամաններ – 17
- ազատվել են ծառայությունից – 20 ծառայող
- պաշտոնի փոփոխություն - 20 ծառայողների
- արձակուրդից են օգտվել – 232 ծառայողներ, որից – 2 ֆիզ.արձակուրդ
- ՃԿՊԱ-ում են վերապատրաստվել – 8 ծառայող
- մերժվել են - 10 գործեր

○ *Շնորվել է թվով 51 փ/ծ կոչումներ՝*

Մայոր – 2 ծառայող
Լեյտենանտ –4 ծառայող
Ավագ լեյտենանտ – 1 ծառայող
Ավագ սերժանտ – 16
Սերժանտ - 16 ծառայող
Կրտսեր սերժանտ -3
Ավագ - 7 ծառայող
Ենթասպա - 2 ծառայող

o 2016թ. անցկացվել է թվով 19 խորհրդակցություններ (*տարեսկզբի առաջադրանքների կատարման մասին – 1; 2015թ. կատարած աշխատանքների ամփոփման մասին – 1; գործակարգավարական –17)*

- պետի կողմից արձակվել է թվով 32 ներքին հրամաններ,
- մուտքի փաստաթղթերի քանակը կազմել է 1038 - գրություններ,
- ելքի փաստաթղթերի քանակը կազմել է 1121 - գրություններ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆՈՒՄՆԵՐԻ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԾԱԳԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

-Գյումրու թիվ 48 ՀՓՋ –727 մեկնում (2015թ. - 687)- աճել է 5.8%-ով

- ***հրդեհներ՝ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 175 (2015թ - 134) - աճել է 30.6%-ով***

հրդեհներ՝ այլ ՀՓՋ սպասարկման տարածքներում – 13

- *վթարներ և պատահարներ ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 17*

հրշեջ մարտավարական պարապմունքներ – 68
մեքենաների վերանորոգում և տեխ. սպասարկում –103
տնտեսական աշխատանքներ - 2
հերթապահություն – 40
կեղծ կանչերի – 16
վառելանյութի, ջրի լցավորում - 23
կենցաղային կանչեր - 219
այլ չնախատեսված ելքեր – 51

Արթիկի թիվ 49 ՀՓՋ – 187 մեկնում (2015թ. -221) նվազել է 15.4%

- ***հրդեհներ՝ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 43 (2015թ - 39) - աճել է 10.3%-ով***
- *վթարներ և պատահարներ ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 3*
- *վթարներ և պատահարներ՝ այլ ՀՓՋ սպասարկման տարածքներում-1*
- *հրշեջ մարտավարական պարապմունքներ - 50*
- *մեքենաների վերանորոգում և տեխ. սպասարկում – 45*
- *տնտեսական աշխատանքներ - 1*
- *կեղծ կանչեր- 19*
- *կենցաղային կանչեր – 12*
- *այլ չնախատեսված ելքեր – 3*

-Ամասիայի թիվ 50 ՀՓՋ –129 մեկնում (2015թ -168)- նվազել է 23.2%

- ***հրդեհներ՝ ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 7 (2015թ –9) – նվազել է 22.2%-ով***
- *հրդեհներ՝ այլ ՀՓՋ սպասարկման տարածքներում – 1*
- *վթարներ և պատահարներ ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 1*
- *հրշեջ մարտավարական պարապմունքներ - 50*
- *մեքենաների վերանորոգում և տեխ. սպասարկում – 39*
- *հերթապահություն- 1*
- *կենցաղային կանչեր(փրկարարական աշխատանքներ) –21*
- *այլ չնախատեսված ելքեր(GPS համակարգի ստուգում) – 9*
- *ճանապարհից վերադարձ- 1*

Անիի թիվ 51 ՀՓՋ– 152 մեկնում (2015թ. -182) - նվազել է 16.5%

հրդեհներ՝ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 33 (2015թ –15) – աճել է 120%-ով

- *հրդեհներ՝ այլ ՀՓՋ սպասարկման տարածքներում – 8*
- *վթարներ և պատահարներ ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 2*
- *վթարներ և պատահարներ՝ այլ ՀՓՋ սպասարկման տարածքներում-1*

հրշեջ տեխզինվածության փորձարկում -3
հրշեջ մարտավարական պարապմունքներ - 52
մեքենաների վերանորոգում և տեխ. սպասարկում – 44

- *հերթապահություն- 1*
- *կենցաղային կանչեր – 4*
- *կեղծ կանչ-3*
- *ճանապարհից վերադարձ - 1*

-Աշոցքի թիվ 52 ՀՓՋ – 91մեկնում (2015թ. -108)- նվազել է 15.7%

- ***հրդեհներ՝ ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 6 (2015թ –3) – աճել է 100%-ով***
- *վթարներ և պատահարներ ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 1*
- *հրշեջ մարտավարական պարապմունքներ - 50*
- *մեքենաների վերանորոգում և տեխ. սպասարկում – 27*
- *այլ չնախատեսված ելքեր – 7*

Ախուրյանի թիվ 53 ՀՓՋ – 181 մեկնում (2015թ. -234)-նվազել է 22.6%

- ***հրդեհներ՝ ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 48 (2015թ – 36) – աճել է 33.3%***
- *հրդեհներ՝ այլ ՀՓՋ սպասարկման տարածքներում – 8*
- *վթարներ և պատահարներ ջոկատի հրդեհաշիջման տարածքում – 16*
- *վթարներ և պատահարներ՝ այլ ՀՓՋ սպասարկման տարածքներում-6*
- *հրշեջ մարտավարական պարապմունքներ -48*
- *մեքենաների վերանորոգում և տեխ. սպասարկում –50*
- *կեղծ կանչ – 1*
- *կենցաղային կանչեր – 7*
- *այլ չնախատեսված ելքեր – 1*

Հրդեհաշիջման օպերատիվ պլանների և հրդեհաշիջման քարտերի մշակման գործընթացի ավարտի վերաբերյալ՝

- ՀՕՊ մշակման ենթակա թվով 76 օբյեկտներից մշակված է 76-ը
- ՀՔ մշակման ենթակա թվով 413 օբյեկտներից մշակված է 413-ը

Գյումրու թիվ 48 ՀՓՋ – պլաններ- 65
քարտեր- 227

Արթիկի թիվ 49 ՀՓՋ - պլաններ- 8
քարտեր- 83

Ամասիայի թիվ 50ՀՓՋ - պլաններ- 0
քարտեր- 26

Անիի թիվ 51 ՀՓՋ – պլաններ- 1
քարտեր- 23

Աշոցքի թիվ 52 ՀՓՋ – պլաններ- 0
քարտեր- 25
Ախուրյանի թիվ 53ՀՓՋ – պլաններ- 2
քարտեր- 29

ՄՇԱԿՎԱԾ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ ՇՄՓՎ 2016թ. տարեկան միջոցառումների աշխատանքային պլանի, ՇՄՓՎ կողմից կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 25.02.2016թ.-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2016 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին» N 32 - Ա որոշումը:

- Կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 11.03.2016թ. N 39-Ա որոշմամբ հաստատվել է Շիրակի մարզում Առափիի սողանքի կտրուկ ակտիվացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը թեմայով շտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին որոշումը:
- Հաստատվել է << Ուշեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Շիրակի մարզի գործողությունների պլանը հաստատելու և ՀՀ Շիրակի մարզպետի 2012թ-ի օգոստոսի 28-ի N 236 – Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ Շիրակի մարզպետի 03.06.2016թ-ի N 172 – Ա որոշումը:
- Հաստատվել է <<ՀՀ Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին>> ՀՀ Շիրակի մարզպետի 08.07.2016թ-ի N 277 - Ա որոշումը::
- Կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 16.09.2016թ. N 343-Ա որոշմամբ հաստատվել է Շիրակի մարզում Փրկարարական աշխատանքների իրականացումը փլուզված շինությունում թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն անցկացնելու մասին որոշումը:
- Ձմեռային ժամանակահատվածում մարզի տարածքում բնակչության անվտանգ երթևեկության ապահովման նպատակով ՇՄՓՎ կողմից կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է <<2016-2017թթ. ձմեռային ժամանակահատվածում միջպետական, հանրապետական, տեղական, նշանակության ավտոճանապարհներին բնակչության անվտանգ երթևեկության ապահովման ուղղությամբ ՀՀ Շիրակի մարզպետի 24.10.2016թ-ի N 376 – Ա որոշումը>>:
- Փոփոխություն է կատարվել ՀՀ Շիրակի մարզպետի <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման Շիրակի մարզային հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին>> 16.02.2012թ-ի N 41 – Ա որոշման N 1 հավելվածում, ՀՀ Շիրակի մարզպետի 16.11.2016թ-ի N 420 – Ա որոշումով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅԼ ԲՆՈՒՅԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 11.11.2013թ-ի N 17/1343 հրամանով հաստատված շտապ զեկույցների հաշվետախտակի ձև 54-ի և համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 01.12.2015 թվականին հաստատված ՀՀ Շիրակի մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ անցկացվող 2016թ-ի հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացման տարեկան թեմատիկ–պլանի, սույն թվականի մարտի 24-ին, հունիսի 24-ին, սեպտեմբերի 26-ին և դեկտեմբերի 23-ին ՀՀ Շիրակի մարզպետարանում Շիրակի մարզային փրկարարական վարչության ԲՊ բաժնի պետ – վարչության պետի տեղակալի, և ԲՊ բաժնի գլխավոր մասնագետի՝ կողմից անցկացվել է հրամանատարական պատրաստության պարապմունքներ՝ «Տարահանված բնակչության կենսապահովման կազմակերպումը», «Հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը ներկայացվող պահանջները և անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը», «ՀՀ տարածքում ԱԻ առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության դեպքում բնակչության ազդարարման և տեղեկատվության տրամադրման կարգը, բնակչության գործողությունները ազդարարման ազդանշաններով», «Շտաբային ուսումնավարժության անցկացման ձևը և անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը», «Քաղաքացիական պաշտպանության դերը երկրի պաշտպանության ընդհանուր համակարգում, ՔՊ ղեկավարումը Հայաստանի Հանրապետությունում» և «Քաղաքացիական պաշտպանության պլաններին ներկայացվող հիմնական պահանջները, դրանց մշակման, համաձայնեցման և հաստատման կարգը», «Հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման ձևը և անհրաժեշտ փաստաթղթերի նախապաստրաստումը»,«Քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության բերման կարգն ու միջոցառումները» և «Կազմակերպությունների (տնտեսության օբյեկտների) գործունեության կայունության բարձրացման հիմնական ուղիները», «Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություններ և ուսումնավարժությունների արդյունքների վերլուծություն», «Տարահանման մարմինները, դրանց կառուցվածքն ու խնդիրները» և «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը» թեմաներով: թեմաներով: Պարապմունքին ներկա են գտնվել մարզային թվով 11 ՔՊ ծառայությունների շտաբի պետերը:
- Ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 09.03.2016թ-ի հանձնարարականի պահանջի, ՓԾ տնօրենին է ներկայացվել առաջարկություններ՝ <<Հայաստանում աղետների ռիսկերի կառավարման ոլորտում կարողությունների գնահատման գործընթացի>> վերաբերյալ:
- Ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի հանձնարարականի, ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել Շիրակի ՄՓՎ կողմից կազմված մարզի թվով 161 ուսումնական հաստատությունների ԱՌՆ և ԱԻ-ում գործելու պլանների մշակման պլան-ժամանակացույցը, իսկ սույն թվականի հունիսի 24-ին Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ-վարչության պետի տեղակալը և բաժնի գլխավոր մասնագետը մասնակցել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից ՄԱԿ-ի գրասենյակում անցկացված՝ մարզի ուսումնական հաստատությունների ԱՌՆ և ԱԻ-ում գործելու պլանների մշակման գործընթացի կազմակերպմանն ուղղված մեկօրյա սեմինարին:
- Սույն թվականի հունիսի 27-30-ը ՇՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգչի կողմից համատեղ «Վորլդ Վիժն Ինտերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ անցկացվել են առաջին օգնության դասընթացներ մարզի ճամբարներում աշխատելու համար ընտրված ապագա ջոկատավարների հետ:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ԾԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ 2016թ-ի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված տարբեր ծրագրերի և Շիրակի ՄՓՎ ԲՊ բաժնի աշխատակիցների կողմից կատարված աշխատանքներին ցուցաբերած մասնակության վերաբերյալ:
- Ի կատարումն ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի 18.10.2016թ-ի N 984- Ա հրամանի պահանջի սույն թվականի դեկտեմբերի 28-ին Շիրակի ՄՓՎ ԲՊ բաժնի գլխավոր մասնագետ՝ Յու. Հակոբյանը մասնակցել է ՀՀ ԱԻՆ աշխատակազմի առաջատար խմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների համար անցկացվող ատեստավորմանը:
- Գյումրի քաղաքի Մազմանյան 175 տան բնակիչ՝ Ա.Գասպարյանի կողմից բարձրացված հարցի (Մազմանյան 175 տան հարակից տարածքում գտնվող, չգործող նախկին կաթսայատան ծխատարի անկայուն վիճակի և դրանից բխող վտանգի) վերաբերյալ, ՇՄՓՎ կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ և արդյունքների մասին տեղեկություններ են ներկայացվել ՀՀ Կառավարության աշխատակազմին:

- Յուրաքանչյուր ուրբաթ ԹՆԱՎ է ներկայացվում ՇՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների մարտական հաշվարկում գտնվող մեքենաների վրա կատարվող վերանորոգման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:
- Յուրաքանչյուր ամիս ԹՆԱՎ պետին են ներկայացվել Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների հատուկ տեխնիկայի, ավտոտրանսպորտային այլ միջոցների շարժի և վառելիքաքսուքային ծախսային հաշվարկների ու հրդեհաշիջման նյութերի ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները:
- Յուրաքանչյուր տասնօրյակ ԹՆԱՎ են ներկայացվել Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների կոմունալ ծախսերի վերաբերյալ տեղեկությունները:
- Յուրաքանչյուր ամիս կատարվել է Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների անձնակազմի համազգեստների ստացում, տեղափոխում և բաշխում:
- Յուրաքանչյուր ամիս իրականացվել է Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների ամսեկան հասանելիք վառելիքաքսուքային նյութերի ստացում, տեղափոխում և բաշխում:
- Տարվա սկզբին ԹՆԱՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ ենթակա ստորաբաժանումների հրշեջ և փրկարարական տեխզինվածության ու մարտական հանդերձանքի վերաբերյալ հաշվետվությունը:
- Յուրաքանչյուր եռամյակ ԹՆԱՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ ենթակա ստորաբաժանումներում “Արձագանք” ծրագրով ստացված գույքի վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունները:
- Յուրաքանչյուր ամիս ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ - ԵՓՎ պետին է ներկայացվում տեղեկություններ ՇՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների կողմից կատարված շինարարական, բարեկարգման աշխատանքների վերաբերյալ:
- ՓՈՒՎ է ներկայացվել ամսվա ընթացքում ՀՓՋ-ների սպասարկման տարածքներում առաջացած հրդեհների տեղեկանքները:
- ԲՊԱՀՎԿՎ և ՕԿՎ է ներկայացվել ամսկան դեպքերի տեղեկատվությունը համակարգ-չային ծրագրի միջոցով:
- ՕԿՎ ՃԿԿ է ներկայացվել յուր.ամիս ԱԻ-ներից,պատահարներից տուժած (զոհված) կանանց և երեխաների վերաբերյալ տեղեկատվությունը:
- Շիրակի ՄՓՎ-ի թվով 28 փրկարար ծառայողներից բաղկացած համահավաք ջոկատը մասնակցել է ս.թ. մարտի 05-ին Վազգեն Սարգսյանի 57 ամյակին նվիրված շարային երթին,որը անցկացվել է Գյումրու կենտրոնական հրապարակում: (ՓԾ տնօրենի 25.02.2016թ N 17.7/2499-16 հանձն.) և (ՓԾ տնօրենի տեղակալ- ԵՓՎ պետի 24.02.2016թ N 17.10/184025-16 հանձն.)
- ՄՓՎ-ն ԵԿՄ Շիրակի մարզային խորհրդի հետ համատեղ «Պատանի երկրապահ» ակումբներում պարբերաբար անցկացրել են «Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն» թեմաներով դասընթացներ
- ՀՀ Շիրակի մարզպետին գրություն է ներկայացվել,որ ելնելով տարածաշրջանում իրավիճակի սրացումից մարզի քաղաքային և գյուղական համայնքների, համատիրությունների, ՔՊ ծառայությունների, կազմակերպությունների, կրթական հաստատությունների ղեկավարներին տալ հանձնարարություն՝ <Ազդարարման ազդանշանների դեպքում բնակչության գործողությունների> հուշաթերթը բնակչությանը հասցնելու գործընթացը մարդկանց կուտակման վայրերում, բնակելի շենքերի մուտքերում փակցնելու և մարզի տարածքում գործող կազմակերպություններում, կրթական համալիրներում տարածելու միջոցով կազմակերպելու և իրականացնելու վերաբերյալ:
- «Լավագույնն ըստ մասնագիտության» մրցանակաբաշխության անցկացման համար ստեղծվել է մարզային ենթահանձնաժողով (ՓԾ տնօրենի ժ/պ 04.07.2016թ. N 17/936 հրամանի 2-րդ կետ):
- Ս.թ հուլիսի 20-ին Առողջապահության միջազգային կազմակերպության աջակցությամբ ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Շիրակ մասնաճյուղի դահլիճում ՄՓՎ-ի մասնակցությամբ անցկացվել է «Երկրաշարժ» և «Քիմիական վթար» տեսական ուսումնավարժանք:
- ՓԾ ՃԿԱԿ է ներկայացվել Շիրակի մարզի պաշտոնատար անձանց իրազեկման ցուցակը (ՓԾ տնօրենի ժ/պ. փ/ծ գեներալ-մայոր՝ Վ.Գաբրիելյանի 07.06.2016թ N 17-1/17.9/6857-16 հանձն.):
- ՀՀ ԱԻՆ աշխատակցի օրվա 25 ամյակին նվիրված ՄՓՎ-ի կողմից անցկացվել են միջոցառումներ՝ ՀՏՈՒ-ներ, ՄՓՎ-ում մարզի լրատվամիջոցներին տրվել է մամլո ասուլիս, ինչպես նաև ծանոթացվել է ՃԿԿ 911 ծառայության գործնեությանը:
- ԹՆԱՎ է ներկայացվել ՄՓՎ 2017թ. անհրաժեշտ գույքի և այլ ապրանքանյութական արժեքների վերաբերյալ հայտը:
- ՕԿՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ-ի 2017թ. նախնական աշխատանքային ծրագիրը (ՓԾ տնօրենի 15.02.2013թ N 17/137 հրամանի 2-րդ կետի 2րդ ենթակետ):
- ՓԾ տնօրենին է զեկուցվել ՄՓՎ-ում 01.04.2015-01.07.2016թթ. ներքին աուդիտի վարչության կողմից հայտնաբերված թերությունները հետագայում բացառելու նպատակով իրականացված միջոցառումների կատարման վերաբերյալ (ՓԾ տնօրենի 19.08.2016թ 7/10/9766-16 հանձնարարական):
- ՕԿՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ սպասարկման տարածքների ռադիոկապի ծածկույթի վերաբերյալ տեղեկատվությունը (ՓԾ տնօրենի 11.10.2016թ 17.8/11632-16 հանձնարարական):
- ՓԾ տնօրենին է ներկայացվել <Լավագույնն ըստ մասնագիտության> մրցանակաբաշխության մարզային հանձնաժողովի կողմից հաղթող ճանաչված փրկարար ծառայողների տվյալները՝ հանրապետական փուլին մասնակցելու (ՓԾ տնօրենի ժ/պ 04.07.2016թ 17/936 հրաման):
- ՓՈՒՎ է ներկայացվել ՄՓՎ ՀՓՋ-ների սպասարկման տարածքներում հրդեհների վերաբերյալ կատարված վերլուծությունների տեղեկատվությունն՝ 14.11.2016թ-ի դրությամբ (ՓԾ տնօրենի 07.11.2016թ 17/17.7/12814-16 հանձնարարականի 2րդ կետ):
- ՕԿՎ է ներկայացվել 2016թ. կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքներով մարզի նորընտիր համայնքապետերի վերաբերյալ տվյալները (ՓԾ տնօրենի 08.11.2016թ 17.8/12880-16 հանձնարարական):
- ԹՆԱՎ է ներկայացվել ՄՓՎ ծառայողական և ենթակա ստորաբաժանումների հրշեջ- փրկարարական ավտոմեքենաների 2017թ. տարեկան տեխ. սպասարկումների պլան- ժամանակացույցը:
- ՓԾ տնօրենին է զեկուցվել ՄՓՎ հաշվեկշռում հաշվառված գույքի օտարման վերաբերյալ առաջարկություններ: (Աշխ. ղեկ. 20.12.2016թ 05/17444-16 հանձն.)
- ՕԿՎ է ներկայացվել 2016-2017թթ. Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ Շիրակի մարզում անցկացվող միջոցառումների (հրավառության) մասին տեղեկատվությունը, որտեղ անհրաժեշտ է իրականացնել հերթապահություն (ՓԾ տնօրենի 28.12.2016թ. 17/1859 հրամանի):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզում արտակարգ իրավիճակների կանխման, իսկ առաջացման դեպքում օպերատիվ արձագանքման, հետևանքների մեղմացման և վերացման աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով առաջարկվում է.

- ՄՓՎ-ի ՃԿԿ-ի գործառույթները լիարժեք իրականացնելու համար համապատասխան հաստիքների հատկացում:
- ՀՓՋ-ների շենք-շինությունների վերանորոգման համար միջոցների հատկացում.
- ՇՄՓՎ բաժիններին և ենթակա ստորաբաժանումներին համակարգիչների, տպիչ սարքերի Scaner-ների) տրամադրում
- ՀՓՋ-ներին ժամանակակից հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների հատկացում.
- Թիվ 49, 50, 52, 53 ՀՓՋ-ներին լեռնափրկարարական գույքի, հիդրավլիկ փրկարարական լրակազմերի տրամադրում:
- Գյումրու թիվ 48 ՀՓՋ-ին ջրափրկարարական գույքի հատկացում:
- ՀՓՋ-ներում առկա ձեռքի ռադիոկայանների թարմացում, հեռադիտակների հատկացում:
- ՀՓՋ-ին գրասենյակային կահույքի հատկացում.
- Գյումրու թիվ 48 ՀՓՋ-ին հավաքարարի հաստիքի հատկացում.
- Աշոցքի թիվ 52 և Անիի թիվ 51 ՀՓՋ-ներին շնչառական ապարատների հատկացում:
- Գյումրի քաղաքում ստեղծել ևս մեկ ՀՓՋ:
- ՇՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների կապի և տեխնիկական միջոցների սպասարկման համար հաստիքի տրամադրում:

Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ,
փ/ծ գնդապետ՝ Ա.Կարապետյան

Կատարող՝ ՃԿԿ պետ

Մ. Մկոյան Հեռ.099-01-46-76